

ՊԱՏՄԱԿԱՆ

ՀԱՅ ԱԶԳԻ ԿԱԶՄԱԻՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

(ԱՐՄԵՆՆԵՐ ԹԷ ՀԱՅԱՍՏԱՑԻՆԵՐ)

Արդ, այս ամէնի վրայ, եթէ Հաշուի առնենք նաև ներքոյիշեալ կէտերը, մեզ թում է, այլես «Հայ» և «Հայաստան» անունները Հայաստայի և Հայաստացիների հետ կապելու վարկածը խիստ կասկածելի բնոյթ կ'ունենայ: Հետեւարար, ինչքան էլ ընդունենք Հայաստացիների պատմական գոյութիւնը, ոչինչ կարող ենք ասել սակայն նրանց պատմական գործունէութեան մասին, որ քաղաքակրթութեան մէջ որևէ նշանակալի դեր խաղացած լինէր:

Որովհետեւ.

ա.— Հայաստացիները իրենց գոյութեան ամբողջ պատմութեան ընթացքում չեն կարողացել զուրս զալ իրենց կիսանկախ վիճակից և տիրել ամբողջ հայկական բարձրավանդակին (Ար. Ալպօյաճեան), նշանակալից քաղաքակրթութեան գործունէութիւն ունենալ, ինչպէս որ եղել է Նայիրի-ուրարտական ցեղերի միութեան պարագան, որի պատմական բարձր մակարդակի ու հզորութեան երբեք չեն կարողացել հասնել Հայաստացիները:

բ.— Հետեւարար, ժամանակի օտար պետութիւնների վկայութիւնները, ինչպիսիք էին Ասորեստաննեան թենուազիր արձանագրութիւնները և աւելի յետոյ՝ Վան-Ճուպեան արձանագրութիւնները, ոչ մի յիշատակութիւն չունեն նրանց մասին, երբ այդ միւնոյն արձանագրութիւնները յիշատակում են Նայիրի-ուրարտական միութեան պատկանող բազմաթիւ տարրեր ցեղերին:

գ.— Պետական ու հասարակական անբաւարար քաղաքակրթութեան հետեանքով, ոչ մի վստահելի ծանօթութիւն չունենք Հայաստացիների ապրած քաղաքների անունների մասին, բացի կամախութից:

դ.— Միւնոյն հիմունքներով՝ նրանց գործածած լեզուից ոչինչ չի հասել: Նրանց անձնանունները խեթական են, իսկ նրանց լեզուն հնդերոպական է, բառերի արմատները խեթական, իսկ ածանցները՝ խուրիտական: Իսկ պէտք է յիշել, որ խեթական (հիթիթների) լեզուն նմանապէս հնդերոպական լեզու է:

ե.— Եւ վերջապէս, Հայաստացիների կրօնական պանթէոնից պատմութիւնը ոչինչ չի ժառանգել և ոչինչ չի ժառանգել և ոչինչ չի յիշում այսօր:

Ուրեմն տեսնում ենք, որ յանձինս Հայաստացիների մեր առջև ունենք քաղաքականութեամբ տկար և քաղաքակրթութեամբ տժզոյն ու անորոշ գէմք ու դիմագիծ ունեցող ցեղային միաւորումների մի տեսակ, որի նման շատ-

շատեր կային անշուշտ տուեալ ժամանակաշրջանում հայկական բարձրավանդակի վրայ :

Հարց է առաջանում .

— Հնարաւո՞ր է արդեօք, որ մի ցեղ կամ ցեղերի մի միաւորում առանց հոգոր քաղաքականութեամբ ու բարձր քաղաքակրթութեամբ ապրած նըշանակալից կեանքի և անցեալի, իր բնաջնջումից 6-7 հարիւր տարի կարողանայ իր անունը պարտադրել ու տարածել տարբեր ցեղերից ու ազգութիւններից կազմուած ազգարնակչութեան ու երկրի վրայ :

Երկրորդ.

— Պելասգիների արշաւանքի տակ 12րդ դարում կործանուելուց յետոյ ինչպէ՞ս և ո՞ւր ապրեցին ու գոյատեսեցին Հայաստացիները: Ի՞նչ եղան նըշանց մնացորդները, երկրի ո՞ր ժամանում ցրուեցին: Ի՞նչ դործունէութիւն ունեցան այսուհետեւ և ի՞նչ ուժ էին ներկայացնում իրենցից:

Պատմութիւնը այս հարցերի պատասխանները չունի: Խոկ ինչ որ ունի ասելու, միայն մի կարճ նախադասութիւն է.

— Ամէն ինչ լուսմ է Հայաստացիների մասին:

Մինչդեռ մենք տեսնում ենք, որ Հիթիթները շարունակում են ապրել իրենց մնացորդներով մինչև մեր թուարկութիւնից առաջ երկրորդ դարու սկիզբը:

— Բոլոր կողմերից հանդած Հայաստացիները 6-7 հարիւր տարիների երկար ժամանակամիջոցում, երբ նրանց փոշին անգամ մնացած չէր լինի, ինչպէ՞ս կարող էին իրենց անունը տալ և ընդհանրացնել:

Անչուշտ այս հարցերի պատասխանները մտահոգել են պատմագէտներից ումանց, որոնք աշխատել են մօտաւոր ենթադրութիւններով զոհանալ և այդ ենթադրութիւնները ներկայացնել որպէս պատմական իրողութիւններ, չեղուելով պատմական սկզբունքներից:

Բաւարարուենք միայն երկու հեղինակների տեսակէտներ քննելով:

Բայ Քասունիի տեսակէտին, Հայաստացիների մնացորդը «Հայկական լեռնաշխարհի զանազան ժողովուրդներու մէջ իրեն անջատ ու կարենոր տարր մը իր գոյութիւնը պահած պիտի ըլլայ»: Զարգացնելով իր տեսակէտը, Քասունին աւելացնում է. «Հաւանականօրէն հեռու չէ ուրեմն խորհիլ, թէ բաւական տեղեր, գուցէ անջատ—անջատ կային Հայաստական զինեալ համայնքներ, ուրոնք իրենց տոհմիկ իշխաններն ու արքայիկները ունեին, որոնք զինակցել են Դայաինիի և Ետիունիի թագաւորներուն»: Այսուհետեւ, շեշտում է Հեղինակը, Հայաստանովի պետութեան կործանումից յետոյ նրանց մնացորդները Փոքր Հայքի կողմերը քաշուած ապրեցին: Ապա յարգելի հեղինակը սիրում է Հայաստանի տարրեր մասերում՝ Երասի գետի ներքմի հոսանքի վրայ, Գեղամայ ծովի ափերի մօտ, Այրարատեան աշխարհում, գուցէ Զարիշատի լճի շուրջ, սփոռուած Հայաստացիների ինքնալիք համայնքներ տեսնել: Այս, սիրում է տեսնել... բայց նրանք չկան ու լոկ կրկներեսոյթ են: Որովհետեւ պատմութիւնը մեղ Հաղորդում է, որ Արմէնները նրդ դարի սկզբում, երբ առաջին անգամ երկացին Ալիս ու Եփրատ գետերի հովիտներում, այսուղ գտան մի քանի ըրենիկ ժողովուրդներ: Խոկ ինչքան առաջացան դէպի Հայկական բարձրավանդակը, այնքան նոր ազգերի և ժողովուրդների Հանդիպեցին: Թուենք նրանց կարեռագոյնները և տեսնենք, թէ որտե՞ղ են այս Հայաստացիները:

Այդ ցեղերը կամ ժողովուրդներն էին՝ Խալդիներ, Մաննացիներ, Մադիացիներ, Սասպիրացիներ, Պակտիացիներ, Խաղիբրացիներ, Մարգացիներ, Տայեցիներ, Մակրոններ, Կատառացիներ, Մոքսացիներ, Ռւտյացիներ,

Աղվաններ, իրերացիններ, Սիւնեցիններ, Անորդներ, Կորդուացիններ, Շակեր, Կասպիացիններ և այլն⁶: Այս անունները աւանդուած են մեզ ու վաւերացուած Յոյն պատմագրութեան (Հերոդոտոս, Քսենոֆոն, Ստրաբոն), ինչպէս նաև հետագայ Հայ պատմիչների կողմից: Բայց Հայաստացինների մասին ո՛չ մի խօսք և ակնարկ: Ո՞ւր էին նրանք և ի՞նչ էին անուած⁷: Բայց իրենց անունը պարտադրելու համար անհրաժեշտ չէ⁸ որպէսզի Արմէններին հաւասար ուժ ներկայացնող տարր լինէին, մանաւանդ «Հայաստան»ի վերածուելու ժամանակաշրջանում: Եթէ ըստ Պրօֆ. Խաչատրեանի, ճիշդ է որ «Հայաստան» բառի «ստան» վերջին մասը պարսկերէնից փոխառնուած է և նշանակում է «տեղ», որը կարող է փոխառնուել Պարսկենների հետ յարաքերութիւններ ունենալուց յետոյ» (Սեպագիր Շրջանի Պատմութիւն), հապա ե՞րբ, որտե՞ղ և ինչպէ՞ս Հայաստացինների և Արմէնների միջև շփում տեղի ունեցաւ և առաջիններից որդեգրուեց «Հայ» անունը: Դժբախտարար, Պրօֆ. Խաչատրեանը տատանուում է այս հարցի երկու ծայրերի միջև: «Հրդդարում — զրում է նաև, կործանուում է Հիթիթ մեծ կայորութիւնը փոխւզների ներխուժումով և իր փլատակների տակ ծածկում է ուրիշ շատ անունների հետ և Հայաստանական անունը օտար երկրների համար»: Շատ ճիշդ է: Այս ահասկէտով գրեթէ ընդմիշտ Պրօֆ. Խաչատրեանը ժխտում է Հայաստացինների մասնակցութեան հնարաւորութիւնը պատմական անունի կազմաւորման: Բայց թէ յարդելի պրօֆեսորը չի ասում, թէ ի՞նչ շարժանիքնից մզուած բնիկ երկրի ներսում այդ անունը պահպան է ու չարունակուում պահպանուել տարբեր ցեղերի մէջ, որպէսզի հետազում տանդուի ամրազջ երկրամասի բնակչութեանը: Այդ ի՞նչ պատմական օրինաշափութիւն է, որ ժողովուրդների զոյամարտին մէջ մի ցեղի անուն ապրի, երբ նրա իւկական, հարազատ տէրը չկայ: Այդ ի՞նչ փայուն յիշատակ է ին թողել Հայաստացինները, որ նրանց անունը Յ-Շ դար յազմական կերպով ապրէր: Ոչ միայն ապրէր, այլև պարտազրէր ինքն իրեն համազային անուան կոչումի, երբ այդ ցեղի հետքն անզամ չէր մնացել...: Իսկ այդ իրաւունքը ինչո՞ւ չցանկանային ունենալ ժամանակին կենդանի ապրող Խալտ-Ռւրաբտական հրդոր ցեղերից մէկն ու մէկը:

Պրօֆ. Խաչատրեանը ծառացած հարցի ծանրութեան տակ աշխատում է, այնուամենայնիւ, որևէ բացատրութիւն տալ, ու զրում է: «Հիթիթները ապրում են մինչև Ստրաբոնի ժամանակները երկրորդ դարու սկիզբը Արտաք-սիսի (Արտաչէս) և Զարիաղրէսի (Զարեհ) ժամանակները: Այսինքն՝ Արտաչէսնեան թագաւորութեան սկիզբը: Նրանց մնացորդները կոչուել են «Կատեր»

⁶ Աւելի մանրամասն տես Գ. Մհերոսպ, «Ուրարտուի Քաղաքակրթութիւնը» և «Արմենիա» գիրքը:

⁷ Այս կապակցութեամբ՝ Հայաստանի գիտնականներից Պրօֆ. Մ. Մըրկրեանն իր «Մովսէս Խորենացի» վերնագրով իրաստակած զրքում, հիմնը-ւելով Ուրարտական բազաւորներից Մենուայի քողած արձանագրական հաղորդումների վրայ, դիտել է տայիս իրաւամք: «Մենուան առաջինն էր, որ անցաւ Եփրատը և մտաւ իերերի երկիրը: Նրա յաջորդները՝ Արգիշտիշ Ա.-ը և Սարդուրիս Բ.-ը շատ աւելի խոշոր նուանումներ են ձեռնարկում այդ կողմերում, բայց դարձեալ իրենց տարեցրութիւններում, ոչ մի անգամ չեն յիշատակում «Խայաստան» կամ «Հայաստան» երկիրը: Իսկ սա նշանակում է՝ կամ երկրի բնակիչները իրենց երկիրը «Խայաստան» չեն կոչել, կամ նրանք այլևս որպէս ցեղ զոյուրիւն չունեն: և այնտեղ արդէն ուրիշ ցեղեր էին բնակում: Անշուշ հաւանական է առաջինը»: (Մ. Մկրեան, Մովսէս Խորենացի, 1970, էջ 197):

կամ «Կատոններ», նախկին Հիթիթները՝ կուտ-խաթ-խատ-կատ : Այս կատերը՝ նախկին Հիթիթները, բոլորն էլ Հայ ազգը կազմող զվարար բաղադրիչ տարրերից էին, կարող էին պահած լինել «Խայասա» անունը, որ դիւրաւ կարող էր ընդհանրանալ» (Սեպագիր Շրջանի Պատմութիւն) : Բայց Պրօֆ. Խաչատրեանը ինչո՞ւ է մոռանում, որ Հիթիթներն ու Հայասացիները քշնամի ցեղեր էին կամ գէթ քշնամական յարաբերութիւնների մէջ ապրող ցեղամիաւորումներ : Ի՞նչ օրինաչափութեան հիման վրայ մի թշնամի ցեղ կարող էր պահել իր թշնամու ցեղի անունը և հնարաւորութիւն տալ նրա անունը «դիւրաւ ընդհանրացնելու» : Այս ենթադրութիւններից արած եղրակացութիւններում առկայն, Պրօֆ. Խաչատրեանը աւելի քան զգաստ է : «Այս բացատրութիւնները —ասում է նա—, ճիշդ լինելու գէպքում իսկ «Խայասա» կամ «Հայասա» ստուգարանութիւնը այնուամենայնիւ «մնում է գեռ անյայտ» (Սեպագիր Շրջանի Պատմութիւն) :

Նոյնպէս Քառունին մեծ ոզմորութեամբ խօսելուց յետոյ «Հայասա» կամ «Հայասացիներ» վարկածի մասին, վերջում, իր եղրակացութիւնները ամփոփում է ջերմութիւնից ընկած հիւանդի թոյլ ձայնով . «Մեծ դժբախտութիւն է, որ Հայասայի թաղաւորներուն կողմէ դրուած որևէ յիշատակութիւն չունինք . Հայասացիների մասին մեր բոլոր դիտցածք իրենց թշնամիներուն՝ Հաթեանց կողմէն պատմուած է, և ասոր մէջ բնականաբար ներքին, մշտկութային կեանքի վերաբերեալ յիշատակութիւններ խիստ ցանցառ են : Առ այժմ Հայասայի մշակոյթին ու քաղաքակրթութեան մասին մեր տեսութիւնը կառուցանելու ուրիշ հիմք չունինք բացի Պողաղքէօյի արձանագրութեանց ժլատ ու միակողմանի տուիքներէն» :

Այս ամէնից յետոյ, մեզ մնում է, առայժմ, «Հայ» բառը ընդունելոչ թէ Հայասա ցեղերի անունից առաջացած բառ, այլ արխական Արմէնների հնդերոպական լեզուից ծագում առած մի անուն, ինչպէս որ փորձել են լեզուարանական ստուգարանութեամբ բացատրել ու հաստատել օտար և Հայ հնդերոպարաններ : Բացի լեզուական օրէնքներից, «Հայ» բառի հնդերոպական ծագումը հաստատւում է նաև պատմական օրինաչափ հանդամանքներով : Հայ (Hay) բառը գիտնականներ համեմատում են հնդերոպական ծագմամբ Պետ (pet) արմատի հետ, որ ժողովրդական գործածութեան մէջ դարձել է «Հայ» բաղաձայնական սիստեմի այն հաստատում տառապարձութեամբ՝ որով Պ (P) տառը հայերէնում փոխւում է Հ (H), իսկ «Տ» (T) «Յ»ի : Հնդերոպական Պետեր (Peter) դարձել է «Հայր» (Hait) : Հայերը ժամանակի ընթացքում պարսկական և սանսկրիտ Պետ (Pet=տէր) ձեից են փոխառնում այդ վերջաւորութիւնը : Հայերը հենց այդ ժամանակուանից էլ պահել են «Պետ»ի գործածութիւնը : Ուրեմն, Հայերը իրենց «Տէր» տիտղոսն են տուել մտնելուց յետոյ Ուրարտու, ուր ապրում էին Խալլ-Ուրարտացիները, որոնց վրայ «Տէր» են դառնում որպէս յաղթողներ : Այս սովորութիւնը պատմականօրէն օրինաչափ երեւյթ է եղել հնդերոպական բոլոր ցեղերի մօտ, որոնք զանազանուելու համար իրենց զրաւած երկրների տեղական բնակիչներից, իրենք իրենց մկրտել են պատուաւոր տիտղոսներով : Այսպէս է եղել Հնդկաստանում, Պարսկաստանում, ուր հնդերոպացիները իրենց անուանել են «Արիններ» (Արիս), այսինքն՝ հաստատուն, հաւատարիմ, իմաստուն, իսկ աեղացիներին՝ «ստրուկներ» :

Առայժմ, միակ տրամարանական և դիտական հիմք ունեցող բացատրութիւնը, ըստ մեղի, որ Հայ և Հայասան բառերի ծագման գործածութեան տալիս է պատմական ստուգութիւն :

(Դար. Ձև վերջ)

Գէլլրդ ՀԱՏԻՑԵԱՆ